Արձանագրություն N 3

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի գնման «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «_22_» «_Փետրվարի_» 2018թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մանյա Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Միհրան Համբարձումյան
	Հասմիկ Մնացականյան
Հանձնաժողովի քարտուղար	Աննա Հարությունյան

1. **ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի ներկայացման վերաբերյալ**

(Մ.Մխիթարյան)

1.1 ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17 ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ <<Սմարքլայն>>, <<Արմքոմփվիններ>> և <<Արվատեկ>> ՍՊԸ-երի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը:

2. **Մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի՝ ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ**

(Մ.Մխիթարյան)

2.1 ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. **ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու և ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ**

(Մ.Մխիթարյան)

3.1 «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից փետրվարի 15-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և ներկայացվել է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասին պահանջվող տեղեկատվությունը: Եզրակացությունը ստացվել է փետրվարի 21-ին. մասնակիցների ներկայացրած տեղեկատվությունը համարվել է իրականությանը համապատասխանող:

4. **Հանձնաժողովը որոշեց՝**

(Մ.Մխիթարյան)

4.1 «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17» ծածկագրով մրցույթի 5, 6, 8-10, 13-16, 18-20, 25, 26, 29-րդ չափաբաժիններով հաղթող մասնակից ճանաչել <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին, 21, 22 և 27-րդ չափաբաժիններով՝ <<Արմքոմփվիններ>> ՍՊԸ-ին, 17-րդ չափաբաժնով՝ <<Արվատեկ>> ՍՊԸ-ին:

4.2 «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին առաջարկել, անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով ներկայացնել պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

4.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ.Մխիթարյան)

5.1 «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/17» ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրի կնքմանը հաջորդող օրը, ժամը՝ 11:00-ին, ՀՀ առողջապահության նախարարության (հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3) 2-րդ հարկում՝ նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մանյա Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Միհրան Համբարձումյան

_____ Հասմիկ Մնացականյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Աննա Հարությունյան